

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ԷՋՄԻԱՆՆԻ ԱՐԽԻԻ.

ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ Ը. ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍԻ ՄԱՀԸ ԵՒ ՆԵՐՍԷՍԻ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Արարատեան նահանգը Ռուսաց պետութեան իշխանութեան տակ մտնելուց յետոյ՝ Կարբեցի Յովհաննէս Ը. Կաթողիկոսի օրով 1836 թուի Մարտի 11ին բարձրագոյն կամօք հաստատուեց այն սահմանադրութիւնը, որ յայտնի է անուամբս « Պօլօժէնիս » որ եւ տպուած է Ս. Էջմիածնում ընդ վերատառութեամբս « ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՅ ԼՈՍԱԼՈՐՅԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՍՆՈՅ Ի ՌՈՍԱՍՏԱՆ »:

Այս կարգադրութեամբ կաթողիկոսի ընտրութիւնը սահմանափակէ ըստ այսմ. —

ԳԼՈՒԽ 2.

ՅԱՂԱԳՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ԷՋՄԻԱՆՆԻ.

Յօդ. 10. Գլխաւոր Կառավարութիւն Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց, և ծայրագոյն տեսչութիւն եկեղեցականաց նորին և ճշտիւ կատարման կանոնաց և ծիսից այսր դաւանութեան պատկանին պատրիարքին Էջմիածնի. սմա գործակից լինի յամենայնի Էջմիածնայ Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն. բայց Պատրիարքն յոչ ինչ դէպս կարէ աւանդել ոչ Սիւնհոգոսին, ոչ այլում իմիք ատենի կամ անձին զիշխանութիւն, զիրաւունս և զարտօնութիւնս՝ սեպհականեալս իւրում աստիճանի:

Յօդ. 11. Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրի յողջոյն ազգէ Լուսաւորչական Հայոց ըստ կարգին՝ սահմանելոյ առ այս.

Յօդ. 12. Ի դատարկանալ տեղւոյ Ծայրագոյն Պատրիարգ Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Լուսաւորչական Սիւնհոգոսն Էջմիածնի առաքէ զճանուցողական նամակս յամենայն վիճակս Լուսաւորչական Հայոց, որ ենն թէ ի Ռուսաստան, և թէ արտաքոյ սահմանաց նորին. նաեւ նշանակէ զտարւոր միջոց առ ընտրութիւն նորոյ պատրիարգի:

Յօդ. 13. Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն պատրիարքի նշանակէ զերկուս պատգամաւորս՝ (դէպուտատ) զմի եկեղեցական և զմի աշխարհական. Պատգամաւորն եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն թեմակալ առաջնորդն, կամ այլ ոք եկեղե-

ցական նշանակեալ ի նմանէ: Իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, ի հարիւրապետաց (յիւզբաշեաց, ի մէլիքաց) և յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմնի ծիսի պսոբ եկեղեցւոյ:

Յօդ. 14. Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք եթէ չկարասցին ներկայանալ անձամբ ի վասն Էջմիածնի ցնշանակեալ ժամանակն վասն ընտրութեան պատրիարգի, ունին իրաւունս յայտնել գրութեամբ զպատողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սիւնհոգոսն Էջմիածնի:

Յօդ. 15. Բաց ի պատգամաւորաց (զէպուտատ) մասնակցին յընտրութեան պատրիարգի ամենայն անդամք Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Էջմիածնի, և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին Եջմիածին. իսկ ի զիպուածս պակասութեան եպիսկոպոսաց, զայն թիւ ընուն երիցագոյն վարդապետք տեղւոյն:

Յօդ. 16. Նոյն ընտրութիւն յառաջանայ Եջմիածին ի Մայր Եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ճիշտ պահպանութեամբ ծիսից սահմանադրելոց ի Լուսաւորչական Եկեղեցին Հայոց առ այս:

Յօդ. 17. Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն և հասուինելոյ գրաւոր դատողութեանցն հասելոց ի Սիւնհոգոսն ըստ զօրութեան 14 երորդ յօդուածոյն, չորեքին աւագագոյնք ըստ առաւելութեան ձայնիցն տուելոց ի նպաստ իւրեանց ճանաչին ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ ի կանդիտատ. իսկ ի զիպուածս հաւասարութեան ձայնի, վիճակն որոշեսցէ՝ թէ ո՞րք պարտին համարիլ աւագագոյնք. ի նոցունց բոլոր ժողովականք առնեն ընտրութիւն երկուց կանդիտատաց ի պաշտօն ծայրագոյն պատրիարգի:

Յօդ. 18. Զկնի այսր ընտրութեան՝ ժողովն առաքէ զերիս պատգամաւորս յանդամոց իւրոց առ գլխաւոր կառավարիչն Վրաստանի, Վոլկասեան և Յայնկոյս Վովկասու եղեալ նահանգաց, որ յաղագս երկուց կանդիտատաց ընտրելոց առաջի առնէ նորին Վայսերական մեծութեան ի բարեհաճութիւն, ընդ ձեռն նախարարութեան ներքին գործոց:

Յօդ. 19. ԹԵԳԵԼԻՈՐ ԿԵՅՍՐՆ նշանակեալ զծայրագոյն պատրիարգն Էջմիածնի զկաթուղիկոսն Հայկազանց՝ ԱՄԵՆՈՂՈՐՄԱԾԵԱՐԱՐ շնորհէ նմա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի. և հրամայէ զկնի երգնելոյն լինիլ հաւատարիմ առ դահն ամենայն Ռուսաց, կատարել զօծումն նորա ըստ վաղեմի ծիսի և սովորութեան Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց:

Յօդ. 20. Պատրիարգն Էջմիածնի կրէ զնոյն տիտղոս (պատուանուն) զոր ունէին ի վաղնջուց ծայրագոյն պատրիարգ կաթուղիկոսունքն Հայկազանց:

Մնացեալ յօդուածները վերաբերումն կաթուղիկոսի իրաւասութիւններին եւ արտօնութիւններին:

«Յաղագս Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Էջմիածնի. վերտառութեամբ 3 գլուխ ըստ 104. 46. Պրօկուրօրի մասնակցութիւնը Սինօգական գործերին եւ յատկապէս կաթուղիկոսի ընտրութեանը սահմանվումէ այսպէս. — «Պրօկուրօրն Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Էջմիածնի ի գործողութիւնս իւր վարի ընդհանրական կանոնադրութեամբ՝ որ վասն պարտաւորութեան Պրօկուրօրի Սոյն սա ունի զհաւասար հսկողութիւն ի վերայ դատաստանական եւ կարգադրական գործոց յառաջացելոց ի Սիւնհոգոսի անդ. եւ առաջիկայ գտանի յընտրութեան ծայրագոյն պատրիարքին Էջմիածնի. զգատաստանական գործոց Պրօկուրօրն առաջի առնէ (մինիստրութեան իւստիցի) նախարարութեան իրաւանց, իսկ զայլոց գործոց՝ նախարարութեան ներքին գործոց, նա նոյնպէս ըստ գործոցն Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Էջմիածնի զիմէ առաջարկութեամբք եւ առ գլխաւոր կառավարիչն Վրաստանի կովկասեան եւ յանկոյս կովկասու եղեալ նահանգաց:

Բարձրագոյն հաստատեալ կարգադրութեան (պօլօթենիա) համեմատ կաթուղիկոսական ընտրութիւն եղաւ առաջին անգամ Կարբեցի Յովհաննէս Ը. կաթուղիկոսի մահից յետոյ *):

1842 թուականի Մարտի 26 ին կէսօրից յետոյ, 7 րդ ժամին վախճանումէ Յովհաննէս կաթուղիկոս: Սինօգի անգամները իսկոյն ժողովելով ի Սինօգ, բարձրագոյն կամօք հաստատուած կարգադրութեան 32րդ 104-րդ ձևի համեմատ որոշումն 1.) Սինօգի երկու անգամ՝ արքեպիսկոպոսների ներկայութեամբ Ա. Սինօգի կնքով կնքել կաթուղիկոսարանի բոլոր թղթերն ու գրաւոր գործերը եւ թողնել վեհարանում մի ապահով տեղ. Բ. նոյն կնքովն կնքել Մայր Աթոռի հանդերձատունը. Գ. ժողովել հանգուցեալ Նիքեմ եւ Յովհաննէս կաթուղիկոսների, Էջմիածնի եւ այլոց կնիքներն եւ պահել Սինօգի ատենում եղած կնքապահութեան երկաթեայ փոքրիկ արկղում, որ Սինօգի կնքով կնքելուց յետոյ յանձնել Սինօգի ատենապետին ի պահպանութիւն: 2.) Կաթուղիկոսի մահուան գործը հաղորդել բոլոր թեմակալ առաջնորդներին եւ Երեւանայ փոխ. — թեմակալին պարտաւորելով եօթնեկի առաջին կիւրակէին հանդիսաւոր պատարագ մա-

(*) Տեղեկութիւնները քաղուած են Յովհաննէս Ը. Կաթուղիկոսի մահուան եւ նոր կաթուղիկոսի ընտրութեան համար 1843 թ. Մարտի 26 ին սկսած եւ 1845 թուի Հոկտեմբերի 8 ին աւարտած Սինօգի № 44 Գործից:

տուցանել եւ նախապէս հաղորդելով կաթուղիկոսի մահուան գոյժը՝ հոգեհանգիստ կատարել տեղւոյն աւագ եկեղեցում, պարտաւորելով՝ որ թեմակալ առաջնորդները նոյնը առաջադրեն եւ իրանց սորադրեալ վարչութեանց կատարելու. 3.) Տպել տալով հանգուցեալ հայրապետի յիշատակութեան ձեւը բաժանել եկեղեցիներին ըստ այնմ վարուելու՝ մինչեւ նոր կաթուղիկոսի ընտրութիւնը. 4.) Հաշորդել գլխաւոր կառավարութեան Վրաստանի, խոստանալով ըստ 2. գլխոյ բարձրագոյն կամօք հաստատեալ կաբգադրութեան անելիք տնօրէնութեան համար հետ զհետէ տալ տեղեկութիւն նոյն կառավարութեան: Ըստ 42րդ. յօդուածոյ կարգադրութեան՝ Սինօդի նախանգամ եւ Մայր Տաճարի Աւագ լուսարար Բարսեղ Արքեպիսկոպոսին յանձնել Սինօդի ատենապետութիւնը: Իսկ կաթուղիկոսական իրաւանց մերաբերեալ պարզ հոգեւորական գործերն ու արտօնութիւնները մինչեւ նորի ընտրութիւնը թողնել առանց հետեւանքի:

Ըստ որոշմանն՝ Ապրիլի 6 ին կայացած տնօրէնութիւնը գործադրութեան Ապրիլի 17 ին շրջաբերականով ուղղուած դէպի ռուսահայոց առաջնորդներն, դէպի Կ. Պօլսոյ Պատրիարքը, ու ամիրաները, դէպի Երուսաղէմայ պատրիարքութեան փոխանորդը*), ու վանական խորհրդարանը (պատրիարքը վախճանուած լինելուն համար), Թաւրիզի եւ Խոպահանի արքեպիսկոպոսները եւ դէպի Հնգկաստանու Հայ իշխանները:

Սինօդը Ապրիլի 17 ին № 767 գրութեամբ գուժելով պատրիարքարանին հանգուցեալ հայրապետի մահը, ի միջի այլոց լինելիք ընտրութեան համար գրումէ Կ. Պօլսոյ պատրիարքին. —

«Բ. Բարձր Սրբազնութիւն ձեր բարեհաճնացի հոգ ունիլ պարտաւորութիւն դնելոյ ի վերայ առաջնորդաց հանուր Պատրիարքական իշխանութեան 2երում յանձն եղեալ թեմիցն Հայոց Տաճկաստանի՝ Արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց եւ վարդապետաց, նշանակել յիւրա-

(*) Երուսաղէմի պատրիարքութեան փոխանորդն էր Պօլսոյ երբեմն պատրիարք Ադրիանուպօլսեցի Պօղոս Արքեպիսկոպոսը, որ Երուսաղէմի գործերը կարգի դնելու համար 1824 թ. գնացել էր Երուսաղէմ եւ Պօլսոյ պատրիարքարանի յանձնարարութեամբ կատարուէր փոխանորդաբար պատրիարքի պաշտօն:

քանչիւր վիճակէ յընտրութիւն նորոյ կաթուղիկոսի ամենայն Հայոց զերկուս պատգամաւորս (վէքիլս) զհոգեւորական և զաշխարհական, այնու, զի պատգամաւորն հոգեւորական լիցի կամ նոյն ինքն առաջնորդն կամ նշանակեացէ ի տեղի իւր զայլ ոմն յարժանաւորագոյն հոգեւորականաց իւրոց գրաւոր ծանօթութեամբ, Իսկ զպատգամաւորն աշխարհական յանձն արասցեն ընտրել ի միջոյ իւրեանց մեծապատիւ ամիրայից, պատուելի անաֆգլիսոց, ամենահարազատ երեսփոխանաց և գանձապետաց, արիաջան և արգարավաստակ տանուտեարց կամ քէհեայից և այլոց պատուաւոր անդամոց Հայաստանեայց եկեղեցւոյ, որոց միանգամայն իրաւունք են առ այն՝ ըստ վաղեմնի ծիսի եկեղեցւոյ մերոյ, որք ի միասին ընդ պատգամաւորացն հոգեւորականաց գալ ունին ի Մայր Աթոռս Ս. Էջմիածին յամսեան Մարտի առաջիկայ 1843 ամի, ուրանօր ի Մայր Տաճարին լուսոյ, սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ունի լինիլ ընտրութիւն նորոգ կաթուղիկոսի ճիշտ պահպանութեամբ ամենայն ծիսից և սովորութեանց՝ կարգելոց վասն այսորիկ կանոնօք եկեղեցւոյն մերոյ սրբոյ, Բաց յայսմանէ, Լուսաւորչական Հայոց Սրբապետն Էջմիածնի առանձին իմն պարտաւորութիւն պաշտելի վարկանի ինքեան, հրաւիրել զհոգեւորական քաջարթուն, զի բարձր Արքայնութիւն Չեր ի միջի լայնատարած և անդուլ զրազմանց ձերոց յօգուտ յանձն եղեալ կառավարութեան ձերում բանաւոր հօտին Քրիստոսի աշխատութիւն յանձին կալեալ վասն այսորիկ ազգային և հասարակօգուտ հարկաւորութեան մեծի կամ անձամբ անձին, շնորհ բերջիք յաթոռս այս Ս. Էջմիածին առ ժամանակն նշանակեալ շքեղազարդել ցանկալի ներկայութեամբ ձերով զայս հանդէս ազգային ընդհանուր ընտրութեան նորոյ կաթուղիկոսի և կամ եթէ ըստ պատճառանաց իրիք ոչ մարթասջիք վճարել զայս անձնովին, գէթ բարեհաճեսջիք առաքել ի դիմաց ձերոց զպատգամաւոր յականաւոր հոգեւորականաց ձերոց և ի կողմանէ Հայոց Առաքանդնուպօլսոյ առաջադրել ականաւոր հասարակութեան Հայոց նոյն քաղաքի ընտրել ի միջոյ իւրեանց զոմն ի մեծապատիւ Ամիրայիցն կամ յԱնաֆգլիսոց, որ նոյնպէս ունի գալ յԷջմիածին առ ժամանակն նշանակեալ, Ընդ այսմ Սրբապետն պատիւ ունի գիտունս առնել զձերդ բարձր Արքայնութիւն թէ պատգամաւորքն, որք ունին ընտրիլ վասն այսորիկ ի վիճական Հայոց Տաճկաստանի, եթէ ոչ մարթասցին անձամբ անձին գալ յԷջմիածին առ ժամանակն նշանակեալ՝ յընտրութիւն կաթուղիկոսի, իրաւունս ունին գրաւորապէս յայտնել զգատողութիւնս իւրեանց վասն անձին, զոր ի հոգեւորականաց եկեղեցւոյ մերոյ արժանի համարին այսմ վեհ աստիճանիս հայրապետութեան ամենայն Հայոց կանխաւ առաքելով զայն գրաւոր կարծիս իւրեանց ի Սրբապետն Էջմիածնի, և թէ ի գալ հասանել պատգամաւորացն և առաքեալ յոմանց ի նոցանէ յիշեալ գատողութեանցն յամսեանն Մարտի 1843 ամի ընտրութիւն

կաթուղիկոսի լիցի սահմանեալ կարգաւն անընդմիջաբար ղկնի Թոսին սրբոյ Զատիկի այնք ամի • և չն:

Աինօգը նոյն բովանդակութեամբ գլխովէ նաեւ Կ. Պօլսոյ Ժողովրդեանը № 768 ի 17 ն Ապրիլի. ընդ վերտառութեամբս. «Գերապատիւ Ամիրայից, յարգելի ասնաճիւղից եւ ամենահարազատ երեսփոխանաց եւ գանձապետաց եւ բոլոր բարեպաշտօն հասարակութեան ականաւոր Հայոցն յԱստուծոյ օրհնեալ մեծի քաղաքին Կ. Պօլսոյ՝ խնդալ »:

Նոյն բովանդակութեամբ նոյն թուով գրումէ Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդ Պօղոս Արքեպիսկոպոսին:

Հեռաւորութեան եւ վտանգաւոր ճանապարհներէ համար չըկարողանալով անձամբ կամ պատգամաւորներով մասնակցել՝ իրանց — եւ իրանց վիճակայնոց ձայները Ս. Էջմիածնի Ժողովին յանձնումեն Կ. Պօլսոյ եւ Երուսաղէմայ պատրիարքներն ու Տաճկաստանի հետեւեալ առաջնորդները հոգեւորականների եւ աշխարհականների բազմակնիք հանրագրութեամբ յուղղած Աինօգի անուանը:

Ա. Կ. Պօլսոյ Հայոց պատրիարքարանը տեղւոյն հոգեւորական եւ աշխարհական ազգայինքներից Ժողով կազմելով, Աստուածատուր Պատրիարքի եւ բոլոր ներկայ եղելոց կնիքներով ու ստորագրութեամբ վաւերացած հանրագրութեամբ Գեկտեմ. 25 ին — 1842 թ: Այդ հանրագրութիւնը Ս. Էջմիածին ուղարկւումէ Նիկոսյօլսոյ առաջնորդ Կեսարացի Պետրոս վարդապետի ձեռքով, որ իրրեւ մինը Ժողովականներից մասնակցումէ ընտրութեանը:

Բ. Երուսաղէմայ պատրիարքը իւր եւ Ս. Յակովբայ վանքի ականաւոր միաբան եպիսկոպոսների ստորագրութեամբ ու կնիքներով վաւերացած հանրագրութեամբ նոյեմբերի սկզբին 1842 թ.

- | | |
|---|---------------------|
| Գ. Զմիւռնիայի առաջնորդ Մատթէոս Արքեպիսկոպոս | 20 Դեկ. 1842 |
| Դ. Թէքիրդաղի առաջ. Յակովբ Արքեպիսկոպոս | 21 Դեկ. 1842 թ. |
| Ե. Վանայ առաջնորդ Մկրտիչ Վարդապետ | 28 Փետ. 1843 թ. |
| Զ. Բաբերդու առաջ. Կարապետ Վարդապետ | 11 Փետ. 1843 թ. |
| Է. Կեսարիայի առաջ. Յակովբ Եպիսկոպոս | 3 Յուն. 1843 թ. |
| Ը. Նիկոմիդիայի վիճակայինք | 31 Յունվարի 1843 թ. |
| Թ. Եզրիանուպօլսոյ առաջ. Սարգիս Եպիսկոպոս | 1 Յուն. 1843 |
| Ժ. Նիկոպօլսոյ վիճակայինք | 30 Յունվ. 1843 թ. |
| ԺԱ. Վանայի վիճակաց առաջ. Ղուկաս Եպիսկ. | 9 Յուն. 1843 |

- ԺԲ. Նիկոմիդիայի վիճակի և Արմաշու 2 արխափան Ս. Աստուածածնի վանքի Արքեպիսկոպոս Ստեփաննոս 18 Յուն. 1843
- ԺԳ. Կուդինայի առաջնորդ Թովմաս Վարդապետ 25 Յուն 1843
- ԺԴ. Ակնայ առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոս Փետրվար. 1843
- ԺԵ. Զանկու առաջնորդ Պետրոս Վարդապետ 24 Փետրվ. 1843
- ԺԶ. Եւդոկիայի, Ամասիայի և Մարզուանու առաջնորդ Յակովբոս Արքեպիսկոպոս (Թիւ չըկայ)
- ԺԷ. Արաբկերու և Արղնու վանքի Եպիսկոպոս, և այցելու Խարերդու չորս վանքերի Յակովբ Եպիսկ. 5 Փետրվարի 1843
- ԺԸ. Պանտրմայի, Մահալճու և Պալլըքքէսարու առաջնորդ Պօլսեցի Մկրտիչ Վարդապետ (Թիւ չըկայ)
- ԺԹ. 2 մէկածագի և Ղուլէյու առաջնորդ Գէորգ վարդ. իւր և Ժողովըրդեան կողմից առանձին առանձին 28 Փետր. և 1 Մարտի 1843

Իրանց եւ իրանց վիճակայնոց ձայները Պօլսոյ պատրիարքարանի տրամաւորութեամբ Ս. Էջմիածնի Ժողովին յանձնուամեն Տաճկաստանի Հետեւեալ առաջնորդները հոգեւորականների եւ աշխարհականների բաղմախիւք եւ բազմաստորագիր հանրագրութեամբ:

- Ի. 1) Պրուսայի առաջ. Թարութիւն Արքեպիսկոպոս 13 Դեկ. 1842
- ԻԱ. 2) Կիւրենոյ առաջ. Կեսարացի Կարապետ Վարդ. 28 Յուն. 1843
- ԻԲ. 3) Կարնոյ և Կարսայ առաջ. Եփրեմ Եպիսկոպոս 23 Ապր. 1843

Հետեւեալ թեմերը չըկարողանալով պատգամաւոր ուղարկել՝ գրաւոր յայտնումեն իրանց ցանկութիւնը ընտրելի համարելով Բեսսարաբիայի եւ նոր—Նախիջեւանի առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսին.

Ա. Ղարաբաղի մետրապօլիտ Բաղդասար Արքեպիսկոպոսը իւր վիճակի հոգեւորականների կողմից:

Բ. Նոր Նախիջեւանի աշխարհական հայ հասարակութիւնը բազմաստորագիր գրութեամբ 3 Ն Մարտի 1843 ամի:

Գ. Ասպահանու առաջնորդ Յովհաննէս Արքեպիսկոպոս Սուրէնեան եկեղեցականներից եւ աշխարհականներից իւր Արքեպիսկոպոսարանում Օգոստոսի 9 ին Ժողով կազմելուց յետոյ՝ գրութեամբ՝ 16 Նոյեմբերի 1842 թ.

Դ. Պետերբուրգի եւ Մոսկուայի աշխարհական հայ հասարակութիւնը, գրութեամբ յանուն Գլխաւոր Կառավարչին Կովկասու, որ № 48 գրութեամբ 29 Մարտի 1843 թ. յայտնումէ Սինօգին:

Ե. Կալկաթայի Հայ Հասարակութիւնը տպեալ գրութեամբ ի 13 Ն Փետր. 1843 ամի*):

Իսկ նոր—Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսը իւր վիճակի հոգեւորականութեան կողմից ընտրելի է համարում Ա. Պօլսոյ երբեմն պատրիարք Պօլոս Արքեպիսկոպոսին, Բ. Տեղակալ ատենապետի, աւագ լուսարար Ս. Էջմիածնի՝ Բարսեղ Արքեպիսկոպոսին, Գ. Զմիւռնիոյ Մատթէոս Արքեպիսկոպոսին, եւ Դ. Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսին:

Ընդելէ Արեւելահայաստանէն Էլն

— Ռուսաստանում.

1. Ներսէս Արքեպիսկոպոս Բեսարաբիայի.
2. Կարապետ Արքեպիսկոպոս Վրաստանի.
3. Բաղդասար Արքեպիսկոպոս Ղարաբաղու.
4. Բարսեղ Արքեպիսկոպոս Աւագ լուսարար Ս. Էջմիածնի.
5. Սերովբէ Արքեպիսկոպոս.
6. Յովսէփ Արքեպիսկոպոս.
7. Ղուկաս Արքեպիսկոպոս.
8. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Արղուժեան.
9. Գէորգ Արքեպիսկոպոս Տաթևացի.
10. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Արարատեան.

(*) Կալկաթայի և Մադրասու Հայերը զեւ 1839 թուին Դեկտ. 14 ին յանուն Յովհաննէս Կաթողիկոսի և 1840 թուի Յունիսի 27 ին յանուն Սինոդի գրութեամբը, 1836 թուին բարձրագոյն Հաստատուած պօլօթենիայի ինչ ինչ յօգուածները փոխելու մասին թախանձել են, Հնդկահայոց այդ խնդրագիրը Յովհաննէս Կաթողիկոսը գրութեամբ 8 Ն Օգոստոսի 1840 թ. առաջարկումէ Կովկասու գլխաւոր կառավարչին, Հնդկահայերը (Կալկաթայի և Մադրասու) Յովհաննէս Կաթողիկոսի մահից յետոյ նոր Կաթողիկոսի ընտրութեան առիթով դիմումեն Ռուսաց կառավարութեան պօլօթենիայի ինչ ինչ յօգուածները փոխելու. այս մասին Ներքին Գործոց Նախարարի զեկուցմանը՝ Նիկողայոս կայսրը բարեհաճումէ հրամայել ընտրութիւնը կատարել սահմանեալ կարգով. իսկ ինչ ինչ յօգուածների փոփոխութիւնը յետաձգել մինչև նոր Կաթողիկոսի ընտրութիւնը, որի մասնակցութիւնը իբրև Հայոց ծայրագոյն Հովուապետի՝ կարևոր է զատվում: Այս հանգամանքը գլխաւոր կառավարութիւնը յայտնումէ Սինոդին գրութեամբ 13 Յունիսի 1842 թ. № 563:

Արտասահմանում (Տաճկաստան)։

1. Աստուածատուր Պատրիարք և Պօլսոյ.
2. Պօղոս Արքեպիսկոպոս երբեմն պատրիարք և. Պօլսոյ.
3. Կարապետ Արքեպիսկոպոս երբեմն պատրիարք և. Պօլսոյ.
4. Յակովբ Արքեպիսկոպոս երբեմն պատրիարք և. Պօլսոյ.
5. Ջաքարիա պատրիարք Երուսաղէմայ
6. Մատթէոս Արքեպիսկոպոս Ջմիւռնիոյ.
7. Պօղոս Արքեպիսկոպոս երբեմն առաջնորդ Ջմիւռնիոյ.

(Պաշտօնական)։

8. Նիկողայոս Արքեպիսկոպոս Թաւրիզոյ.
9. Յովհաննէս Արքեպիսկոպոս Ասպահանու.

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐՆ ԷԻՆ.

Ա. Սէնտիւն Անդամներ.

1. Տեղապահ ատենապետի, նախանդամ Սինօդի, Աւագ Երուսարար Բարսեղ Արքեպիսկոպոս
2. Յովսէփ Արքեպիսկոպոս Վեհապետեան.
3. Ղուկաս Արքեպիսկոպոս Արագածունի.
4. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Արարատեան.
5. Յակովբ վարդապետ Տէր Մարգարեան.
6. Սահակ վարդապետ Սաթունեան.
7. Փիլիպպոս վարդապետ Արամեան.
8. Աւետիք վարդապետ Ծաղիկեան

Բ. Ս. Էջմիշի Միաբան-Նեան Կողմից պարգումներ.

9. Ա. Գէորգ Եպիսկոպոս Վեհապետեան.
10. Բ. Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեան.
11. Գ. Պօղոս Եպիսկոպոս
12. Դ. Գէորգ Արքեպիսկոպոս Սիսակեանց Տաթևացի.
13. Ե. Ծաղկարար Իսահակ Եպիսկոպոս.
14. Ջ. Մկրտիչ Եպիսկոպոս Փամօրհնոյ.
15. Է. Ստեփաննոս Եպիսկոպոս Ծեր կոչեցեալ Չորագեղցի.

Գ. Ռաւանի Վեհապետ-Նեան պարգումներ.

- | | |
|--|---------------|
| 16. Ստեփաննոս Եպիսկոպոս Արղուծեան և |) Երևանու. |
| 17. Պ. Բարսեղ Ղօրղանեան | |
| 18. Բարսեղ Եպիսկոպոս յաջորդ Ղլարու և |) Աստրախանու. |
| 19. Պ. Աստուածատուր Բալասանեան | |
| 20. Գէորգ Եպիսկոպոս Տէր Դաւթեան և |) Վրաստանի |
| 21. Պ. Դաւիթ Թամամչեան | |
| 22. Ջաքարիա վարդապետ Աբովեան և |) Շիրվանու. |
| 23. Պ. Թովմաս Ավագեան | |
| 24. Պ. Բահրամ բէկ Շահնաղարեան — Ղարաբաղու. | |

Արարատահման հայերի պատգամաւորներ.

25. Սիմէօն Վարդապետ—Ատրպատականի

26. Պետրոս Վարդապետ առաջնորդ 'սիկոպոլոյ'—Տաճկահայոց.

Ա. Ժողով' 15 Ապրիլի, ուր միայն աշխարհական պատգամաւորները երդուեցին:

Բ. Ժողով' Ապրիլի 16, ուր ԲԱՐՁՐԱԳՈՅՆ, Կամօք Ներքին գործոց Նախարարութեան կողմից ուղարկուած Ստատսկի սովեանիկ Անդրէյ Իվանիչ Ժելոտևսովի եւ Սինօգի պրօկուրօրի պաշտօնակատար կօլեփսկի ասսեսօր Մատինովի ներկայութեամբ 18 երեւելի Արքեպիսկոպոսներէն ընտրուեցին չորսը կանգիտաւորներ կաթողիկոսութեան, որոնք են, 1. Բեսարաբիայի եւ Նոր Նախիջևանի Առաջնորդ' Ներսէս Արքեպիսկոպոս, 2. Երուսաղէմայ պատրիարք' Զաքարիա Արքեպիսկոպոս, 3. Երբեմն Պօլսոյ պատրիարք Կարապետ Արքեպիսկոպոս եւ 4. Երբեմն Զմիւռնիոյ առաջնորդ Պօղոս Արքեպիսկոպոս:

Գ. Ժողով' 17 Ապրիլի, ուր ընտրուած չորս կանգիտաւորներէն Ներսէս Արքեպիսկոպոս ստանալով 26 ձայն. Զաքարիա Արքեպիսկոպոս Երուսաղէմայ պատրիարք 17 ձայն, իւրեւ ստացող բազմութեան ձայնից' համարվում են առաջարկելի կաթողիկոսացու ի հաստատութիւն թագաւոր Կայսեր, իսկ Պօլսոյ երբեմն պատրիարք Կարապետ Արքեպիսկոպոսը ստանալով 3 ձայն եւ Զմիւռնիոյ երբեմն առաջնորդ Պօղոս Արքեպիսկոպոսը 11 ձայն, յետ են մնում:

Ժողովը վերջացնելուց յետոյ, Սինօգը գրութեամբ 19 Ապրիլի 1843 թ. № 595 ըստ 18 յօդ. պօլօթենեային — Ատրախտնու պատգամաւոր Բարսեղ եպիսկոպոսի, Բաղդասար Բալասանեանի եւ Վրաստանի պատգամաւոր Դաւիթ Թամաճեանի միջոցով առաջարկում է Ժողովների բոլոր օրագրութիւնները եւ ընտրիւեաց յանկը' Կովկասու կառավարչին, որի առաջարկութեամբ եւ Ներքին Գործոց Մինիստրի ղեկուցմամբ Թագաւոր Կայսրը բարեհաճ կամքով ընդունելով ընտրութեան եղբակացութիւնը, 1843 թ. Օգոստոսի 10ին բարձրագոյն հրովարտակով Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսին ճանաչում է Կաթողիկոս ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց գրելով ըստ այսմ.

(Թարգմանութեան Ուսման Երկն) .

« Ծանիցէ ամենայն ազգ Հայոց, թէ զիջեալ ի համաձայն խորհուրդ փափագանաց, որ յայտնեցաւ հանդիսիւ յէջմիածին ի 17^ն աւուր Ապրիլի այսր 1843 ամի, մեք հաստատեմք զարհի Եպիսկոսն Ներսէս յատիճան պատրիարքի Էջմիածնի և Կաթողիկոսի ամենայն Հայոց, Օրհնեսցէ ամենաբարձրեալն զձայրագոյն պատրիարքն ի գերագոյն պաշտաման Տեառն առ բարին և փրկութիւն ամենայն սիրեցեալ ի մէնջ ազգին Հայոց, Տուաւ ի նախագահ քաղաքի մերում Սրբոյն Պետրոսի յամի ծննդեան Քրիստոսի 1843 յՕգոստոսի 10^ն աւուր, յովովորտաներորդի ամի թագաւորութեան մերում ».

• ՆԻԿՈՂԱՅՈՍ •

« Նախարար Ներսէն Գործոց Պետկոսի ».

Ներսէս՝ կաթողիկոս ընտրուելուց ու հաստատուելուց յետոյ, Ներքին Գործոց Նախարարի միջոցաւ հրաւիրուելով Ս. Պ. Բուրգայն տեղ հիւանդանումէ, որով եւ յետաձգուամէ դէպ ի Ս. Էջմիածին գալուստն ու օծումն: Ինչպէս երեւումէ Սինօդի 1843 թուի Նոյեմբերի 12^{ին} կայացրած օրագրութիւնից, ոչ միայն նորընտիր կաթողիկոսների անուաններն ի հիւանդանոցն օծուիլը չէ յիշուել եկեղեցում, այլ եւ նոքա եկեղեցում մէջ չեն էլ կանգնել կաթողիկոսին յատկացեալ գմբէթաւորի մէջ*) . իսկ անդրանիկ կոնդակը միայն Ս. օծումն ընդունելուց յետոյ է հրատարակուել: Թէեւ Սինօդը նորընտիր կաթողիկոսի անունը եկեղեցում չը յիշատակելու տարակուսութիւնը բառնալու համար սկսել էր գրագրութիւն Վրաստանի գլխաւոր կառավարութեան միջոցաւ Ներքին Գործոց Սինիստրի հետ, սակայն Ներսէս նորընտիր կաթողիկոսը իւր № 26 ի 26^ն Նոյեմբերի 1843 ամի կոնդակով յանդիմանումէ Սինօդին եւ հրամայումէ — առանց իւր համաձայնութեան ինչ եւ իցէ գործի համար բողոքարկու չըլինել դէպի Տէրութեան Բարձրագոյն կառավարութիւնները: այս կոնդակին ստորագրումէ,

« Եպիսկոպոսապետ Կաթողիկոս եւ պատրիարք ամենայն Հայոց Ներսէս » . իսկ իւր առաջագրութեամբ յանուն Տեղակալ Բարսեղ Արքեպիսկոպոսի 21^{ին} Յունի, 1844 ամի, պատուիրու-

(*) Միայն Աուկաս Կաթողիկոս մինչեւ Տաճկահայոց հաւանութիւնն ընդունիլը՝ գմբէթաւորի մէջ չէ կանգնել, Ըստ ազգային սովորութեան, ընտրութիւնը լրանալուն պէս, ընտրեալը կաթողիկոս է բոլոր իրաւամբ, Կրմնայ հանդիսաւոր օծումն:

մէ թուղթը ստանալու առաջին կիւրակէին՝ անձամբ պատարագել, եւ Մայր Աթոռում կաթուղիկոսի անունը յիշատակելուց յետոյ՝ հրամանագրել Սինոդից որ յիշատակուի կաթուղիկոսի անունը բոլոր եկեղեցիներում։

Սինոդը կատարելով Կովկասու գլխաւոր Կառավարչի 1843 թ. Յունւարի 5 գրութեամբ առաջարկութիւնը նախնական սովորութեանց ու աւանդութեան եւ պօթեմնիայի տրամագրութեան համեմատ ընտրութեան կարգի մի հրահանգ է ծրագրում 41 յօդուածներով, որ նոյն թուի Փետրվարի 5 ին առաջարկումէ Կովկասու գլխաւոր Կառավարչին ի հաստատութիւն յայտնելով որ — յիշեալ հրահանգութիւնը կազմելիս ինքը (Սինոդը) հետեւել է նախնեաց սովորութեանը, որին հաւան կըլինին Ռուսաստանի եւ Պարսկաստանի հայերը. իսկ Տաճկաստանցւոց համար գրումէ. «Իսկ որ ինչ վերաբերի առ հայո Տաճկաստանի եւ հոգեւորականութիւն նոցա, որովհետեւ ի վաղուց անտի կարհեալ են հաղորդակցութիւնք նոցա ընդ էջմիածնի, վասն որոյ անյայտ է իսկութեամբ Սիւնհոդոսին ոչ այժմեան ոգի նոցա եւ ոչ եղանակ մտածմանց»։ Յիշեալ հրահանգութիւնը սակաւ փոփոխութեամբ եւ յապաւմամբ հաստատուումէ 19 Ն Ապրիլի 1843 թ. որ դնումենք այստեղ երգման օրինակի եւ ընտրութեան ձեւերի հետ։

ԿԱՆՈՆՔ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ԳԼՈՒԽ Ա.

Յապագա անյանց, որք հասնակից են ընտրութեան Մայրաքոյն Պատրիարք Կաթուղիկոսի.

Յօդ. 1. Ըստ զօրութեան 13. յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամք հաստատեալ կարգադրութեանն ի 11 Մարտի 1836 ամի, յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւն Մայրաքոյն Պատրիարք Կաթուղիկոսին լինի ընդ ձեռն պատգամաւորաց, որք երկու երկու առաքին յիւրաքանչիւր վիճակաց մին հոգեւորական և միւսն աշխարհական պատգամաւորն եկեղեցական